

3.5. ՔԱԹԱՐ. ԱՆՑԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՂԻՆ ԵՎ «ԱԶԳԱՅԻՆ-2030» ՏԵՍԼԱԿԱՆԸ

ՏԱԹԵՎԻԿ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
01.07.2021-30.09.2021

Ներածություն: Քաթարի Պետության ուսումնասիրության արդիականությունը կայանում է նրանում, որ վերոգրյալ երկիրը հանդիսանում է աշխարհի 25 ամենահարուստ երկրներից առաջինը¹ և վերջին 20 տարիների ընթացքում գրանցել է անվանական համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճ²: Ըստ Համաշխարհային մրցունակության վարկանիշի (IMD)³ Քաթարը 2019 թ. զբաղեցրել է աշխարհի մրցունակ տնտեսությունների 10-րդ հորիզոնականը³:

Առաջին հայացքից կարելի է ենթադրել, որ խոսքը վերաբերում է նավթագազային ոլորտից ստացված եկամուտներին, սակայն խոր ուսումնասիրության արդյունքում բացահայտվում են այն ոլորտները և ճյուղերը, որոնք ապահովում են երկրի տնտեսության զարգացման բարձր մակարդակը (կրթություն, բանկային համակարգ, ճանապարհաշինություն և այլն): Այդ իսկ պատճառով Քաթարի վարած արտաքին և ներքին տնտեսական քաղաքականությունը ուշադրության կենտրոնում են պահում միջազգային փորձագետները և հետազոտողները:

Հոդվածի նպատակը և խնդիրները: Հոդվածի նպատակն է՝ պատմական իրադարձությունների ուսումնասիրության արդյունքում առանձնացնել կամ ընդգծել Քաթարի տնտեսության այն ճյուղերը, որոնք ապահովել են պետության տնտեսական վերելքը, և կատարել տեղայնացված առաջարկություններ:

Հաշվի առնելով վերոգրյալ նպատակը՝ հոդվածում լուծվում են հետևյալ խնդիրները.

- ✓ վերլուծել և գնահատել տնտեսական քաղաքականության մշակման միջազգային փորձը,
- ✓ ուսումնասիրել տնտեսության զարգացման կարևորագույն ճյուղերը,
- ✓ բացահայտել ՀՀ տնտեսության զարգացման համար հիմք հանդիսացող ճյուղերի առաջընթացը:

Գրականության վերլուծություն: Քաթարի Պետության մասին ուսումնասիրությունները սակավ են, քանի որ որպես անկախ պետություն այն «կնքվել է» 1970 թ.՝ դուրս գալով Բրիտանիայի գաղութի կարգավիճակից:

Ռուս հետազոտող Է. Կասանի «Քաթարը 21-րդ դարում. տնտեսական զարգացման ընթացիկ միտումները և կանխատեսումները» աշխատությունը

¹ <https://www.trt.net.tr/armenian/tntesowt-yown/2016/04/08/ashkharhi-25-amenaharowst-erkrnere-466511>

² <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KN?locations=QA>

³ Тематическое приложение к ежедневной деловой газете РБК, среда, 2 июня 2021 | № 80 (3369) Катар, стр. 4

նվիրված է Քաթարի Պետության (այսուհետ՝ Քաթար) ժամանակակից տնտեսությանը: Ուշադրության կենտրոնում են ներդրումային միջավայրը, մակրոտնտեսական ցուցանիշները, ֆինանսական շուկան և հարաբերությունները, ինչպես նաև վարած արտաքին քաղաքականությունը¹:

Ի. Ա. Ալեքսանդրովի «Պարսից ծոցի միապետություններ. արդիակա-նացման փուլ» աշխատության մեջ ուսումնասիրվել են Քաթարի տնտեսու-թյան զարգացման վերջին երեք տասնամյակները: Ներկայացվել և ուսումնա-սիրվել են սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման ու արդիակա-նացման համար առանցքային նշանակություն ունեցող կետերը: Տրվել է «արաբական վեցնյակի» արտաքին քաղաքականության խոր համակար-գային վերլուծություն: Աշխատությունը պարունակում է վիճակագրական տվյալներ, գնահատականներ և կանխատեսումներ, ինչպես նաև հեղինակի անձնական դիտարկումները²:

«Նավթի և գազի արդյունաբերությունը Քաթարում» օտարերկրյա վեր-լուծության մեջ, որը տպագրվել է Հասարակայնության հետ կապերի բաժին կողմից, առանձնացվում են գազի և նավթի դերը երկրի տնտեսության մեջ: Այդ աշխատանքը գնահատում է բնական ռեսուրսների արդյունահանումը Քաթարում և ընդգծում Ընդհանուր նավթային կորպորացիայի դերը այդ կենսական նշանակության ունեցող ոլորտի զարգացման գործում³:

Ինչ վերաբերում է հիմնարար ուսումնասիրություններին, ապա դրանց մեջ կարելի է առանձնացնել Ալի Ա. Հադի Ալշաուիի «Ալ-Մուրայի ցեղը Քա-թարում. քաղաքական ազդեցություն»⁴ գիտական հետազոտությունը: Ուսում-նասիրության ուշադրության կենտրոնում է Քաթարի զարգացման վրա Ալ-Մուրայի ցեղի ունեցած կարևորագույն ազդեցությունը: Երկրի քաղաքական ու տնտեսական գործունեության մեջ խիստ կարևորվում է կրոնի և ցեղային մտածելակերպի դերը:

Վերոնշյալ հետազոտական աշխատանքների հրապարակումները թույլ են տալիս եզրակացնել, որ թեման ուսումնասիրված է: Սակայն չկա որևէ աշ-խատանք, որում ուսումնասիրվել է Քաթարի և Հայաստանի Հանրապետու-թյան տնտեսությունների կապը:

Մեթոդաբանություն: Սույն աշխատանքի շրջանակում օգտագործվել են համընդհանուր գիտական՝ պատմատրամաբանական և մասնավոր՝ հավա-

¹ Эльдар Касаев, Катар в XXI веке: современные тенденции и прогнозы экономического развития, Международные отношения, 2013, 184 с. ISBN: 978-5-7133-1435-4

² Александров И.А. [И.А. Мелихов]. Монархии Персидского залива: этап модернизации / И. А. Александров. М.: Дело и сервис, 2000, 544 с. - ISBN 5-8018-0073-5

³ Oil and gas industry in Qatar, Qatar General Petroleum Corporation. published by: The public relations department. 1992. - 62

⁴ Hadi Alshawi, Ali A., "The Al-Murrah Tribe in Qatar: Political Impact". Master's Theses. 3836. Western Michigan University Kalamazoo, Michigan, December, 1994.

քաղաքական մեթոդները, վիճակագրական մեթոդները, ինչպես նաև պահպանվել է վալիդության սկզբունքը:

Կիրառական նշանակությունը: ՀՀ-ն, ունենալով բանկային համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մի շարք խնդիրներ, կարող է տեղայնացնել և ներդնել Քաթարի՝ վերոնշյալ ոլորտներում հաջողությամբ իրականացված փորձը:

Վերլուծություն: Քաթարն առանձնանում է կառավարման արդյունավետ գործիքակազմերով և գրագետ մշակված ռազմավարությամբ, որոնք էլ նպաստել են երկրի զարգացմանը: 1970-2019 թթ. ընթացքում անվանական համախառն ներքին արդյունքը ավելացել է մոտ 582.6 անգամ¹: Հետազոտությունները և դիտարկումները հիմնականում իրականացվել են 1970 թվականից՝ Քաթարի անկախության ձեռքբերումից սկսած²: Պետությունը, գիտակցելով և ընդունելով, որ զազը և նավթը սպառվող բնական պաշարներ են (Քաթար – 120 տարի)³, մշակում է տնտեսության զարգացման համար այլ ոլորտներ ևս:

Աղյուսակ 1

Քաթարի Պետության անվանական համախառն ներքին արդյունքի դինամիկան 2000-2009 թթ. (մլրդ դոլար)⁴

Տարեթիվ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
ՀՆԱ	17.76	17.54	19.36	23.53	31.73	44.53	60.88	79.71	115.27	97.8

Աղյուսակ 2

Քաթարի Պետության անվանական համախառն ներքին արդյունքի դինամիկան 2010-2019 թթ. (մլրդ դոլար)⁵

Տարեթիվ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
ՀՆԱ	125.12	167.77	186.83	198.73	206.23	161.74	151.73	161.1	183.34	175.84

Ժամանակակից Քաթարը աշխարհի հարուստ երկրներից մեկն է: Աղյուսակ 1-ից և աղյուսակ 2-ից երևում է, որ շուրջ երկու տասնամյակ Քաթարը ցուցադրում է անվանական ՀՆԱ-ի աճի բարձր տեմպեր: 2000 թ. համեմատությամբ 2019-ին անվանական ՀՆԱ-ն աճել է մոտ 9.9 անգամ:

¹ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=QA>

² https://qatar.mid.ru/ru/dvustoronnie_otnosheniya/informatsiya_o_gosudarstve_katar/

³ Ближний Восток в фокусе политической аналитики : сборник научных трудов : к 15-летию Центра ближневосточных исследований / Моск. гос. ин-т междунар. отношений (ун-т) М-ва иностр. дел Рос. Федерации, Ин-т междунар. исследований, Центр ближневосточных исследований. — Москва: ИМИ МГИМО, 2019. — 548 с. ISBN 978-5-9228-2026-4, стр.46

⁴ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=QA>

⁵ Նույն տեղում:

Նորին մեծություն Շեյխ Համադ բին Խալիֆա Ալ-Թանին՝ Հայր Էմիրը, առաջ էր քաշել Քաթարի «Ազգային տեսլականը-2030»-ը՝ «ՔԱԹ-2030»-ը¹, որը պետք է իրականացվեր փուլային եղանակով: «ՔԱԹ-2030»-ի չորս հիմնական սյուներն են մարդկային զարգացումը, սոցիալական զարգացումը, տնտեսական զարգացումը և բնապահպանական զարգացումը²:

2011 թ. ուժի մեջ էր մտել Քաթարի 2011–2016 թթ. հնգամյա զարգացման ռազմավարությունը³: 2011–2016 թթ. զարգացման ազգային ռազմավարության ծրագրերն ու նախագծերը արտացոլում էին երկրի զարգացման առաջնահերթությունները և հիմնված են «ՔԱԹ-2030»-ի չորս փոխկապակցված հիմնասյուների վրա⁴: Թվում էր, թե նավթագազային ոլորտից ստացված եկամուտները քաթարցիներին թույլ կտային ապրել առանց խնդիրների, բայց մշակված տեսլականի առկայությունը վկայում էր ճիշտ հակառակը:

Պետությունը փորձում էր դուրս գալ նավթագազային արդյունաբերության ճիրաններից և զարգացնել երկրի տարբեր ճյուղերը: Աշխատանքի շրջանակում ներկայացվել են բանկային համակարգ (տնտեսական զարգացում հիմնասյունից) և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտները (մարդկային զարգացում հիմնասյունից):

Բանկային համակարգ

1993 թ. օգոստոսի 5-ին հաստատվեց Քաթարի ԿԲ հիմնադրման մասին թիվ 15 օրենքը, որին տրվեց ազգային արժույթի թողարկման իրավունք⁵:

Երկրում բանկային գործունեություն ծավալելու համար ձեռք են բերում և՛ լիցենզիա, և՛ առաջնորդվում են Ղուրանի չգրված օրենքներով (շարիաթ)⁶:

Քաթարի կենտրոնական բանկը⁷ (ՔԿԲ) լիցենզավորում է 4 տեսակի բանկերի՝ ազգային բանկը, ազգային բանկի մասնաճյուղը Քաթարում, ազգային բանկի մասնաճյուղը Քաթարից դուրս, արտասահմանյան բանկի մասնաճյուղը Քաթարում:

Շարիաթի օրենքները տարածվում են մուսուլմանական կյանքի բոլոր ասպեկտների վրա: Բանկային համակարգը նույնպես անմասն չի մնում և գործում է շարիաթի օրենքներին համապատասխան: Իսլամական բանկերի ֆինանսական գործառնությունների տարբերությունը այն է, որ ըստ շարիաթի՝ օրենքն արգելում է վարկերի տրամադրումը տոկոսի դիմաց, արգելված գործունեության հետ կապված նախագծերի ֆինանսավորումը (դրանք են՝ զենքի, դրամախաղերի, խոզի մսի արտադրության, ծխախոտի, ակոհոլի հետ

¹ https://www.psa.gov.qa/en/qnv1/Documents/QNV2030_English_v2.pdf, page 1

² https://www.psa.gov.qa/en/qnv1/Documents/QNV2030_English_v2.pdf, page 11

³ Qatar National Development Strategy 2011~2016 Summary of Programmes, page 2

⁴ Qatar National Development Strategy 2011~2016 Summary of Programmes, page 3

⁵ <http://www.qcb.gov.qa/English/Legislation/Law/Pages/QCBLaw.aspx>

⁶ Исламские финансы в современном мире: экономические и правовые аспекты/Под ред. Р.И. Беккина. М.: Ummah, 2004. 283 с. -ISBN 5-94824-219-6, стр. 282

⁷ <http://www.qcb.gov.qa/English/SupervisionandControl/LicensingAndRegistration/Pages/Licensing.aspx>

կապված գործարքները), սպեկուլյատիվ գործարքները, պայմանագրի պայմանների անորոշությունը՝ կապված ապրանքների, ժամկետների և վարձատրության հետ¹:

Բանկերի գործունեությանը վերաբերող վերոնշյալ պայմաններից ակնհայտ է, որ բանկային համակարգի աշխատանքը ամբողջությամբ համաձայնեցվում է նրանց կրոնի հետ, իսկ խախտումների դեպքում կիրառվում են խիստ պատիժներ:

Իսլամական բանկերի ֆինանսավորման հիմնական գործիքները տարբերվում են ավանդական բանկերի գործիքներից, նրանով որ ավանդական բանկերի գործունեության հիմնական նպատակը շահույթ ստանալն է: Իսլամական բանկերի դեպքում գործում են 6 ֆինանսավորման գործիքներ, որոնք, ըստ շարիաթի օրենքների, բաժանվում են երկու հիմնական խմբի՝ մասնակցություն եկամուտներում և վնասներում (*մուդարաբա*, *մուշարակա*) և պարտքային սկզբունքի հիման վրա (*մուրաբախա*, *իջարա*, *սալամ*, *խստիս-նա*)²: Դասակարգումից դուրս է մնում *կարդ խասան* ֆինանսավորման տեսակը, քանի որ այն իրենից ներկայացնում է ավելի շատ կրոնական, քան տնտեսական գործառույթ:

Աղյուսակ 3

Իսլամական բանկերի ֆինանսավորման տեսակները և տոկոսները^{3,4,5}

Ֆինանսավորման տեսակները	%	Գործարքի էությունը
Մուրաբախա	78	Տվյալ դեպքում գործարքն իրականացվում է երկու կողմերի՝ բանկի և գնորդի միջև: Գնորդը որոշակի ապրանքի ձեռքբերման հայց է ներկայացնում բանկին: Բանկը ապրանքի գնման գործարքը կատարում է սեփական միջոցներով, իսկ վաճառքը՝ նախնական պայմանավորված գնով: Ֆինանսավորման այս տեսակը տարբերվում է մուդարաբայից նրանով, որ գումարի դիմաց բանկը ստանում է ապրանք և այն պատկանում է իրեն: Հետագայում գնորդը կարող է հրաժարվել ապրանքի ձեռքբերումից, սակայն բանկը ֆինանսական լուրջ կորուստներ չի կրում:
Իջարա	11	Ժամանակակից ֆինանսական պայմաններում կարելի է նույնականացնել լիզինգի հետ: Տվյալ դեպքում բանկը, ձեռք բերելով ապրանքը, լիզինգի հիմունքներով այն տրամադրում է այլ անձի: Լիզինգի արտոնություններից օգտվողը բանկին է փոխանցում պարգևատրման տեսքով «շնորհակալությունը», իսկ ապրանքը շարունակում է մնալ բանկի սեփականությունը:

¹ Пехтерева Е.А., Исламские финансы и перспективы исламского банкинга в России, Экономические и социальные проблемы России, 2015 г., стр. 110-112 (<https://cyberleninka.ru/article/n/islamskie-finansy-i-perspektivy-islamskogo-bankinga-v-rossii/viewer>, page 6-7)

² Исламские финансы в современном мире: экономические и правовые аспекты/Под ред. Р.И. Беккина. М.: Ummah, 2004. 283 с. -ISBN 5-94824-219-6, стр. 59, 62

³ В. В. Антропов, Исламские банки в мировой финансовой системе, Научный журнал Банка России, Деньги и кредит. № 7, 2017, стр. 59-61.

⁴ Исламские финансы в современном мире: экономические и правовые аспекты/Под ред. Р.И. Беккина. М.: Ummah, 2004. 283 с. -ISBN 5-94824-219-6, стр. 59-69

⁵ Пехтерева Е.А., Исламские финансы и перспективы исламского банкинга в России, Экономические и социальные проблемы России, 2015 г., стр. 114-116.

Մուշարակա	4	Ենթադրում է գումարի սեփականատիրոջ (բանկի) և ներդրում իրականացնողի համագործակցություն: Որոշելով ներդրումներ կատարելու ուղղությունը՝ համատեղ ֆինանսավորում են նախագիծը: Տվյալ ֆինանսավորման տեսակը ենթադրում է, որ շահույթ ստանալու դեպքում գումարը բաժանվում է կողմերի միջև, իսկ վնասների դեպքում կողմերը կորցնում են իրենց ներդրած գումարը:
Մուդարաբա	2	Այս դեպքում բանկը հանդիսանում է դրամական միջոցների սեփականատերը, որը, վստահության վրա հիմնվելով, գումարը տրամադրում է միջանկյալ օդակին (մուդարիբ): Բանկը ներդնում է դրամական միջոցները, իսկ մյուս կողմը (մուդարիբ)՝ սեփական գիտելիքները և փորձը (մարդկային կապիտալ): Վերջինս իրավունք ունի իր հայեցողությամբ տնօրինելու գումարը: Այս տեսակի ֆինանսավորման բացասական հետևանքն այն է, որ գործարքի ձախողման դեպքում բոլոր ռիսկերը իր վրա է վերցնում բանկը՝ զրկվելով ներդրած գումարից:
Սալամ	2	Գործարքի տեսակ, երբ բանկը գնորդի համար ձեռք է բերում որոշակի ապրանք, որը երրորդ անձը վերամշակում կամ օգտագործում է այլ արտադրության մեջ: Պատրաստի ապրանքը բանկը հետագայում վերավաճառում է գնորդին: Գնի մեջ ներառվում է բանկային ծառայությունների դիմաց վճարը: Տվյալ տեսակը հիմնականում օգտագործում են գյուղատնտեսության, սեզոնային աշխատանքների ֆինանսավորման դեպքում:
Կարդ խասան	1	Այստեղ տեղի է ունենում դրամական միջոցների տրամադրում այլ անձի՝ առանց դրա դիմաց տոկոսների պահանջով: Այս դեպքում ֆինանսավորումը կրում է կրոնական, այլ ոչ տնտեսական գործառնություն: Բանկը կարդ խասան ֆինանսավորում տալիս է վստահության հիմունքներով: Այն կարելի է նույնականացնել սպառողական վարկերի հետ, որոնք նախատեսված են ամուսնության, կրթություն ստանալու, նոր ապրանքներ ձեռք բերելու համար:
Իստիսնա	1	Ֆինանսավորման այս տեսակը հանդես է գալիս որպես բանկային ապրանք, որի դեպքում վաճառողի դերում բանկն է: Վճարումը կատարվում է նախապես պայմանավորված գնով և ժամկետներում, բայց ոչ միանվագ, այլ ժամանակացույցի համաձայն: Նախքան ապրանքի արտադրությունը երկու կողմերն էլ հնարավորություն ունեն հրաժարվել գործարքից: Ներկայումս գործարքի հիմնական դժվարությունը ճիշտ ժամանակացույցի մշակումն ու աշխատանքի իրականացումն է:

Աղյուսակ 3–ից երևում է, որ ֆինանսավորման տեսակների ավելի քան ¾–ը բաժին է հասնում մուդարաբախա տեսակին: Տվյալ դեպքում գործարքը կատարվում է երկու կողմերի՝ բանկի և գնորդի միջև: Ֆինանսավորման այս տեսակը տարբերվում է մուդարաբայից նրանով, որ գումարի դիմաց բանկը ձեռք է բերում ապրանք, որը հանդիսանում է իր սեփականությունը: Հետագայում գնորդը կարող է հրաժարվել ապրանքի ձեռքբերումից, որի հետևանքով բանկը ֆինանսական լուրջ կորուստներ չի կրում: Երկու կողմերին էլ ձեռնտու է հետևյալ գործարքը, քանի որ բանկին է պատկանում ապրանքի սեփականության իրավունքը, իսկ գնորդը չունի ապրանքը գնելու որևէ պարտավորվածություն:

Բանկային համակարգի գործունեությունը Բաթարում բավականին բազմազան է: Կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- բանկերը գործում են միայն իրենց կրոնի համաձայն,
- բանկային գործունեության շրջանառության օբյեկտ է ոչ թե փողը, այլ ապրանքը,

- բանկային համակարգը իրականացնում է գործունեություն՝ թափանցիկության սկզբունքներից ելնելով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ

Ունենալով նավթագազային ոլորտի 120 տարվա պաշար՝ դժվար է ուշադրությունը բնեղել տնտեսության այլ ճյուղերի զարգացմանը: Այնուամենայնիվ, Քաթարը «ԲԱԹ-2030» տեսլականի միջոցով ամբողջ ուժերն ուղղել է դիվերսիֆիկացնելու զարգացման ուղղությունները, մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաները:

2004 թ. ընդունվել էր «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների գերագույն խորհրդի» (այսուհետ՝ Խորհուրդ) մասին օրենք, որում նշվում էին ՏՀՏ ոլորտի կառուցվածքը, գործառույթները, կառավարումը, նպատակները և այլն: «Հեռահաղորդակցման» 2006 թ. N 34 օրենքը սահմանում էր հեռահաղորդակցության լիցենզիաների քաղաքականությունը, ռադիոհաճախականության կառավարումը, գերիշխող ծառայությունների մատուցողներին, ծառայությունների սակագները, շուկայական մրցակցությունը և սպառողների պաշտպանությունը, ինչպես նաև ՏՀՏ գերագույն խորհրդի լիազորությունները և նպատակները¹: Նախատեսվում էր ապագայում անհրաժեշտության դեպքում նաև լրացուցիչ հատուկ կանոնակարգերի, կանոնների և պաշտոնական որոշումների մշակում և ընդունում, որպեսզի այս մարմնի իրավական կարգավիճակը հաստատվեր:

1993 թ. Քաթարում ստեղծվեց «Արևելյան ծոց» ՄՊԸ-ն, որն առաջարկում էր երկու հիմնական ծառայություն և լուծում՝ կայքերի պատրաստում և տեղեկատվական տեխնոլոգիաների լուծումներ: Հետագայում այն ենթարկվեց թվային փոփոխությունների և լրացումների՝ առաջարկելով վերլուծության, շարժունակության, կիրառական գիտության, սոցիալական մեդիայի և այլնի լուծումներ²:

Քաթարի Դոհա քաղաքում 2011 թ. մայիսի 24-26-ին առաջին անգամ տեղի ունեցավ տեխնոլոգիական համաժողով և ցուցահանդես, որը կոչվում էր «QITCOM. գիտաժողով և ցուցահանդես-2011»³: Խոսելով դրա բացմանը՝ Խորհրդի գլխավոր քարտուղար Խ. ալ Ջաբերը նշել է գիտաժողովի երեք հիմնական թեմաները՝ նորարարություն, կապ և փոխակերպում: Նա հորդորում էր ներկաներին բարձրաձայնել իրենց ստեղծարար գաղափարները աշխարհը բարեփոխելու համար: Քարտուղարի նպատակն էր Քաթարը դարձնել Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա տարածաշրջանի թվային բովանդակության կենտրոն⁴: Նշենք, որ գիտաժողովների և ցուցահանդեսների սկիզբը դրվել է 2011 թ., սակայն դրանք շարունակական բնույթ են կրում:

¹ https://www.motc.gov.qa/sites/default/files/documents/RA_Annual_Report_2011_EN_1.pdf, page 46

² <https://ict.com.qa/about-ict/>

³ https://www.motc.gov.qa/sites/default/files/documents/QITCOM_Schedule_English.pdf

⁴ <https://www.motc.gov.qa/en/speeches/dr-hessa-al-jaber-opening-speech-2011-qitcom>

«IFP» Քաթար ՍՊԸ-ն, որը հանդիսանում է նաև «QITCOM. գիտաժողով և ցուցահանդես-2011»-ի կազմակերպիչը, մեծ ուշադրություն է դարձնում գյուղատնտեսության և սննդի միջոցառումներին¹: Նրակողմից անցկացվելիք միջոցառումներն են՝ Սնունդ Աֆրիկա Կահիրե, Իրաքի ագրո -սնունդ – Երբիլ, Օմանի ագրոսնունդ:

Տվյալ կառույցը միջնորդ է հանդիսանում ամբողջ աշխարհում արդյունաբերության ոլորտի խաղացողների և նոր ներդրումներ «պահանջող» ոլորտների փոխգործակցության միջև: Ի պատասխան այդ խնդրին, ի թիվս մի շարք ոլորտների՝ «IFP» Քաթար ՍՊԸ-ը կազմակերպում է նաև գյուղատնտեսության և սննդի միջազգային առևտրային ցուցահանդեսներ: Ցուցահանդեսների ընթացքում բոլոր չափերի ընկերությունները հնարավորություն են ունենում դեմ առ դեմ հանդիպել հազարավոր մեծածախ առևտրականների, միջնորդների և մասնագետների հետ, որոնց ներդրած գումարներով հնարավոր է սկիզբ դնել իրենց նախագծերի իրականացմանը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օրենքների ընդունման, փոփոխության, տեխնոլոգիական համաժողովների, ցուցահանդեսների, միջոցառումների կազմակերպման հարցերից բացի, Քաթարը նաև ապագային միտված բարեփոխումներ է դիտարկում:

2017 թ. Քաթարում սկսեցին գործարկել «TAMSU» անվանմամբ «Խելացի երկիր» նախագիծը: Վերջինս կոչված էր արագացնելու «ՔԱԹ-2030» բոլոր հենասյուների զարգացումը և արդիականացումը: Նախագծի հեղինակները, հիմնվելով երկրի համար կարևոր ուղղությունների (շրջակա միջավայր, տրանսպորտ և լոգիստիկա) վրա, ցանկանում էին, օգտագործելով նորարարական տեխնոլոգիաները, բարելավել բնակչության կենսամակարդակը և նրանց մատուցվող պետական ծառայությունների որակը²:

Նման մոտեցումը կարող է հիմք ծառայել թվային տնտեսության և խելացի ապագայի կերտման համար: Իրենց նպատակին հասնելու համար Քաթարը ջանք և ֆինանսներ չի խնայի: Երկիրը նախատեսում տեխնոլոգիական առաջընթացի համար անհրաժեշտ բոլոր նախաձեռնությունների վրա առաջիկա հինգ տարիների ընթացքում ծախսել 6 միլիարդ քաթարյան դիալ³:

«Խելացի երկիր» նախագծին աջակցող կառույցը կոչվում է Շարժական ոլորտի նորարարությունների քաթարյան կենտրոն (ՇՈՆԿԿ, QMIC – The Qatar Mobility Innovations Center), որը հիմնադրվել է 2009 թ.: Վերջինս հանդիսանում է տարածաշրջանում առաջին անկախ ինովացիոն կենտրոնը, որը, նորարարական գաղափարները և գիտելիքները օգտագործելով, կստեղծի ավելի բարենպաստ քաղաքային կյանք⁴: Պետության ֆինանսական

¹ <http://www.ifpexpo.com/sector3>

² <https://qrmedia.world/ru/umnyj-katar-kak-vnedrenie-tehnologij-menyaet-zhizn-v-strane/>

³ <https://www.motc.gov.qa/en/search/content/tasmu>

⁴ <https://www.qmic.com/>

աջակցությամբ և իրենց մարդկային կապիտալի ներդրմամբ համատեղ իրականացված ծրագրերից են՝ Wain, Tasleem, Shams¹:

Առաջինը բջջային հավելված է, որը ներկայացնում է քաղաքի քարտեզը և տեղաբաշխման ծառայությունները: Այս հավելվածի միջոցով հնարավոր է տեղեկանալ արագաչափ տեսախցիկների տեղակայման մասին, գտնել կայանատեղի և նույնիսկ հետևել Քաթարի իրադարձություններին:

Երկրորդը ապրանքների առաքման մեջ ամերիկյան «Ուբեր» ընկերության անալոգ քաթարական «Ուբերն» է: Գաղափարի ստեղծողները ցանկանում էին նվազեցնել լոգիստիկայի ծախսերը և ժամանակը, ինչը թույլ կտա միևնույն ժամանակում սպասարկել ավելի շատ թվով հաճախորդների:

Հետաքրքրաշարժ է երրորդ՝ «Եղանակային կայաններ և օդի որակի մոնիտորինգի համակարգ և ծառայություններ» (Smart Work Safety Management Solution (Shams)) անվանումով ծրագիրը², որն իրենից ներկայացնում է անվտանգության կառավարման ավտոմատացված համակարգ: Սարքավորումները տեղակայվում են 3 տարբեր տեղանքներում, որից տեղեկատվություն են ստանում օդի և եղանակի մասին: Տվյալ համակարգի ներդրման առավելություններն են.

- շրջակա միջավայրի ճառագայթման սահմանված վտանգավոր փոփոխությունների վերաբերյալ ահազանգերի ստացում: Ճառագայթման մասին տեղեկատվության հիման վրա կարելի է կառուցել ավելի գրագետ աշխատանքային գրաֆիկ, որը թույլ կտա կառուցապատողներին խուսափել աշխատանքի հետաձգումից:

- Վտանգավոր նյութերի և գազերի իրական ժամանակում չափում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների մաս են կազմում նաև ինտերնետը և բջջային կապերը: Երկրում թվային տնտեսությունն իրականություն է, քանի որ ինտերնետ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը 93.6 % է³, իսկ ըստ Internet World Stats-ի՝ բնակչության ներթափանցումը՝ 104.3 %⁴: Բջջային հեռախոսների բաժանորդագրությունները Քաթարում 2000 թ. 120,856 էին, իսկ 2019 թ. քանակը հասել են 3.92 միլիոնի⁵: Այսինքն՝ Քաթարը այն երկիրն է, ուր բջջային հեռախոսակապի թիվը աճել է մոտ 32.4 անգամ: Երկիրը գերազանցել է իր բնակչության բջջային հեռախոսակապի 100 % ապահովության մակարդակը (դա հնարավոր է օգտագործողի կողմից մեկից ավելի SIM քարտ օգտագործելու հետևանքով)՝ կազմելով մոտ 140 %: Մեջ

¹ <https://qrmedia.world/ru/umnyj-katar-kak-vnedrenie-tehnologij-menyaet-zhizn-v-strane/>

² <https://www.qmic.com/industries/utilities/>

³ <https://knoema.com/atlas/Qatar/topics/Telecommunication/Internet-Users/Share-of-households-with-Internet>

⁴ <https://www.internetworldstats.com/stats5.htm>

⁵ <https://knoema.com/atlas/Qatar/topics/Telecommunication/Telecomm-Services/Mobile-cellular-subscriptions%20>

բերված թվերը վկայում են, որ Քաթարում տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքգործումը բնակչության առօրյա կյանք ապահովված է:

Գիտական նորույթը: Քաթարի անցած տնտեսական ուղու և «Ազգային-2030» տեսլականի ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հիման վրա բացահայտվել են երկրի բանկային համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ զարգացումն ապահովող նորարարական կառուցակարգեր և մոտեցումներ (*սալամ* ֆինանսական գործիք, «Shams» անվտանգության կառավարման համակարգ), որոնց կիրառությունը թույլ կտա լուծել ՀՀ բանկային համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների առջև ծառացած որոշ խնդիրներ:

Եզրակացություններ

Երկրի տեսլականը հիմնվում է տնտեսական ուժերի դիվերսիֆիկացիայի գաղափարի վրա: Ճյուղերի և ոլորտների արդիականացման արդյունքում հնարավոր է թուլացնել երկրի կախվածությունը նավթագազային ոլորտից: Պետությունը ձգտում է մշակել, կիրարկել այնպիսի ռազմավարական ծրագիր, որը թույլ կտա նրան արդյունավետ գործել նավթային դարաշրջանի ավարտից հետո: Գիտակցելով և ընդունելով, որ գազը և նավթը սպառվող բնական պաշարներ են, երկիրը մշակում է տնտեսության զարգացման համար այլ ոլորտներ ևս: Մշակվում է Քաթարի «Ազգային տեսլական-2030»-ը՝ «ԲԱԹ-2030»-ը, որը իրականացվելու է փուլային եղանակով: Տեսլականի հանգուցային մաս է կազմում չորս հիմնասյուների վրա կառուցված Քաթարի 2011–2016 թթ. հնգամյա զարգացման ռազմավարությունը: Երկրի զարգացման և արդիականացման համար բոլոր չորս հիմնասյուները պետք է փոխկապակցված և փոխլրացնող լինեն, որպեսզի հասնեն ցանկալի արդյունքի:

Բանկային համակարգ: Երկրում բանկային գործունեություն ծավալելու համար ձեռք են բերում և՛ լիցենզիա, և՛ առաջնորդվում են Ղուրանի չգրված օրենքներով: Բանկային համակարգի աշխատանքը ամբողջությամբ համաձայնեցվում է կրոնի հետ: Իսլամական բանկերի ֆինանսավորման գործիքները տարբերվում են ավանդական բանկերի ֆինանսավորման գործիքներից (թվով 7–ն են):

Բանկային համակարգի գործունեությունը Քաթարում բավական բազմազան է: Կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- բանկերը գործում են միայն իրենց կրոնի համաձայն,
- բանկային գործունեության շրջանառության օբյեկտ է ոչ թե փողը, այլ ապրանքը,
- բանկային համակարգը իրականացնում է գործունեություն՝ թափանցիկության սկզբունքներից ելնելով:

Առաջարկություն բանկային համակարգում.

- Հայաստանի Հանրապետությունում ստեղծել Քաթարի բանկային համակարգում օգտագործվող «Մալամ» տեսակի ֆինանսական գործիք: ՀՀ–ում

թիրախային ոլորտներից մեկը գյուղատնտեսությունն է, իսկ վերը նշված գործիքի էությունը հետևյալն է. «Գործարքի տեսակ, երբ բանկը գնորդի համար ձեռք է բերում որոշակի ապրանք, որը երրորդ անձը վերամշակում կամ օգտագործում է այլ արտադրության մեջ: Պատրաստի ապրանքը բանկը հետագայում վերավաճառում է գնորդին: Գնի մեջ ներառվում է բանկային ծառայությունների դիմաց վճարը: Տվյալ տեսակը հիմնականում օգտագործում են գյուղատնտեսության սեզոնային աշխատանքների ֆինանսավորման դեպքում»:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ: 2004 թ. ընդունվել էր «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների գերագույն խորհրդի» մասին օրենք, որը 2006 թ. ենթարկվել է լրացումների և փոփոխությունների:

Առանձնացնելով այս ոլորտը՝ Քաթարը ձգտում է բնակչության քաղաքային կյանքի դյուրացմանը: Պետությունը ջանք և ֆինանսներ չի խնայում, որպեսզի զարգացնի այս հիմնարար ճյուղը: Կազմակերպվում են գիտաժողովներ ու ցուցահանդեսներ, որոնք տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ զարգացնում և առաջընթաց են ապահովում այլ ճյուղերի համար:

Վերջին տարիներին մշակել են «Խելացի քաղաք» նախագիծ, որին աջակցող և նպաստող կառույց է հանդիսանում Շարժական ոլորտի նորարարությունների քաթարյան կենտրոնը: Վերջինս, գեներացնելով նոր մտքերը և փորձը, կարողացել է ստեղծել նոր «ապրանքներ»:

Առաջարկություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում.

- շինարարությունը ՀՀ-ում զարգանում և ակտիվանում է, որը, հանդիսանալով սեզոնային աշխատանք, պետք է գործի անխափան: Առաջարկվում է ստեղծել «Shams» անվտանգության կառավարման համակարգ, որը շրջակա միջավայրի ճառագայթման սահմանված վտանգավոր փոփոխությունների վերաբերյալ ահազանգեր է տալիս: Ճառագայթման մասին տեղեկատվության հիման վրա կարելի է կառուցել ավելի գրագետ աշխատանքային գրաֆիկ, որը թույլ կտա կառուցապատողներին խուսափել աշխատանքի հետաձգումից:

Օգտագործված գրականություն

1. Александров И.А. [И.А. Мелихов]. Монархии Персидского залива: этап модернизации / И. А. Александров. М.: Дело и сервис, 2000, 544 с. - ISBN 5-8018-0073-5.
2. Ближний Восток в фокусе политической аналитики : сборник научных трудов : к 15-летию Центра ближневосточных исследований / Моск. гос. ин-т междунар. отношений (ун-т) М-ва иностр. дел Рос. Федерации, Ин-т междунар. исследований, Центр ближневосточных исследований. Москва: ИМИ МГИМО, 2019, 548 с. ISBN 978-5-9228-2026-4

3. В. В. Антропов, Исламские банки в мировой финансовой системе, Научный журнал Банка России, Деньги и кредит, № 7, 2017, стр. 57-64
4. Исламские финансы в современном мире: экономические и правовые аспекты/Под ред. Р.И. Беккина. М.: Ummah, 2004, 283 с. -ISBN 5-94824-219-6
5. Пехтерева Е.А., Исламские финансы и перспективы исламского банкинга в России, Экономические и социальные проблемы России, 2015
г.[r.\(https://cyberleninka.ru/article/n/islamskie-finansy-i-perspektivy-islamskogo-bankinga-v-rossii/viewer\)](https://cyberleninka.ru/article/n/islamskie-finansy-i-perspektivy-islamskogo-bankinga-v-rossii/viewer)
6. Тематическое приложение к ежедневной деловой газете РБК, среда, 2 июня 2021 | № 80 (3369) Катар
7. Эльдар Касаев, Катар в XXI веке: современные тенденции и прогнозы экономического развития, Международные отношения, 2013, 184 с. ISBN: 978-5-7133-1435-4
8. Hadi Alshawi, Ali A., "The Al-Murrah Tribe in Qatar: Political Impact". Master's Theses. 3836. Western Michigan University Kalamazoo, Michigan, December 1994
9. Oil and gas industry in Qatar, Qatar General Petroleum Corporation. published by: The public relations department. 1992, 62
10. Qatar National Development Strategy 2011~2016 Summary of Programmes
11. <http://www.ifpexpo.com/sector3>
12. <http://www.qcb.gov.qa/English/Legislation/Law/Pages/QCBLaw.aspx>
13. <http://www.qcb.gov.qa/English/SupervisionandControl/LicensingAndRegistration/Pages/Licensing.aspx>
14. <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=QA>
15. <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KN?locations=QA>
16. <https://ict.com.qa/about-ict/>
17. <https://knoema.com/atlas/Qatar/topics/Telecommunication/Internet-Users/Share-of-households-with-Internet>
18. <https://knoema.com/atlas/Qatar/topics/Telecommunication/Telecomm-Services/Mobile-cellular-subscriptions%20>
19. https://qatar.mid.ru/ru/dvustoronnie_otnosheniya/informatsiya_o_gosudarstve_katar/
20. <https://qrmedia.world/ru/umnyj-katar-kak-vnedrenie-tehnologij-menyaet-zhizn-v-strane/>
21. <https://www.internetworldstats.com/stats5.htm>
22. <https://www.motc.gov.qa/en/search/content/tasmu>
23. <https://www.motc.gov.qa/en/speeches/dr-hessa-al-jaber-opening-speech-2011-qitcom>
24. https://www.motc.gov.qa/sites/default/files/documents/QITCOM_Schedule_English.pdf
25. https://www.motc.gov.qa/sites/default/files/documents/RA_Annual_Report_2011_EN_1.pdf
26. https://www.psa.gov.qa/en/qnv1/Documents/QNV2030_English_v2.pdf
27. <https://www.qmic.com/>
28. <https://www.qmic.com/industries/utilities/>

29. <https://www.trt.net.tr/armenian/tntesowt-yown/2016/04/08/ashkharhi-25-amenaharowst-erkrnere-466511>

References

1. Aleksandrov I.A. [I.A. Melihov]. Monarhii Persidskogo zaliva: jetap modernizacii / I. A. Aleksandrov. M.: Delo i servis, 2000, 544 s. - ISBN 5-8018-0073-5.
2. Blizhnij Vostok v fokuse politicheskoy analitiki : sbornik nauchnyh trudov : k 15-letiju Centra blizhnevostochnykh issledovanij / Mosk. gos. in-t mezhdunar. otnoshenij (un-t) M-va inostr. del Ros. Federacii, In-t mezhdunar. issledovanij, Centr blizhnevostochnykh issledovanij. Moskva: IMI MGIMO, 2019, 548 s. ISBN 978-5-9228-2026-4
3. V. V. Antropov, Islamskie banki v mirovoj finansovoj sisteme, Nauchnyj zhurnal Banka Rosii, Den'gi i kredit, # 7, 2017, str. 57-64
4. Islamskie finansy v sovremennom mire: jekonomicheskie i pravovye aspekty/Pod red. R.I. Bekkina. M.: Ummah, 2004, 283 s. -ISBN 5-94824-219-6
5. Pehtereva E.A., Islamskie finansy i perspektivy islamskogo bankinga v Rossii, Jekonomicheskie i social'nye problemy Rossii, 2015g. (<https://cyberleninka.ru/article/n/islamskie-finansy-i-perspektivy-islamskogo-bankinga-v-rossii/viewer>)
6. Tematicheskoe prilozhenie k ezhdnevnoj delovoj gazete RBK, sreda, 2 ijunja 2021 | # 80 (3369) Katar
7. Jel'dar Kasaev, Katar v XXI veke: sovremennye tendencii i prognozy jekonomicheskogo razvitija, Mezhdunarodnye otnoshenija, 2013, 184 s. ISBN: 978-5-7133-1435-4
8. Hadi Alshaw, Ali A., "The Al-Murrah Tribe in Qatar: Political Impact". Master's Theses. 3836. Western Michigan University Kalamazoo, Michigan, December 1994
9. Oil and gas industry in Qatar, Qatar General Petroleum Corporation. published by: The public relations department. 1992, 62
10. Qatar National Development Strategy 2011~2016 Summary of Programmes
11. <http://www.ifpexpo.com/sector3>
12. <http://www.qcb.gov.qa/English/Legislation/Law/Pages/QCBLaw.aspx>
13. <http://www.qcb.gov.qa/English/SupervisionandControl/LicensingAndRegistration/Pages/Licensing.aspx>
14. <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=QA>
15. <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KN?locations=QA>
16. <https://ict.com.qa/about-ict/>
17. <https://knoema.com/atlas/Qatar/topics/Telecommunication/Internet-Users/Share-of-households-with-Internet>
18. <https://knoema.com/atlas/Qatar/topics/Telecommunication/Telecomm-Services/Mobile-cellular-subscriptions%20>
19. https://qatar.mid.ru/ru/dvustoronnie_otnosheniya/informatsiya_o_gosudarstve_katar/

20. <https://qrmedia.world/ru/umnyj-katar-kak-vnedrenie-tehnologij-menyaet-zhizn-v-strane/>
21. <https://www.internetworldstats.com/stats5.htm>
22. <https://www.motc.gov.qa/en/search/content/tasmu>
23. <https://www.motc.gov.qa/en/speeches/dr-hessa-al-jaber-opening-speech-2011-qitcom>
24. https://www.motc.gov.qa/sites/default/files/documents/QITCOM_Schedule_English.pdf
25. https://www.motc.gov.qa/sites/default/files/documents/RA_Annual_Report_2011_EN_1.pdf
26. https://www.psa.gov.qa/en/qnv1/Documents/QNV2030_English_v2.pdf
27. <https://www.qmic.com/>
28. <https://www.qmic.com/industries/utilities/>
29. <https://www.trt.net.tr/armenian/tntesowt-yown/2016/04/08/ashkharhi-25-amenaharowst-erkrnere-466511>

ՔԱԹԱՐ. ԱՆՑԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՂԻՆ ԵՎ «ԱԶԳԱՅԻՆ-2030» ՏԵՍԼԱԿԱՆԸ

ՏԱԹԵՎԻԿ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

Համառոտագիր: Ժամանակակից Քաթարը զարգացող պետություն է, որն իր վարած արտաքին և ներքին տնտեսական քաղաքականության շնորհիվ գտնվում է միջազգային փորձագետների ուշադրության կենտրոնում: Ուսումնասիրության նպատակն է՝ առանձնացնել կամ ընդգծել Քաթարի այն ճյուղերը, որոնք ապահովել են պետության տնտեսական վերելքը: Դրան հասնելու համար պատմատրամաբանական և հավաքագրման մեթոդների կիրառմամբ լուծվել են հետևյալ խնդիրները. վերլուծել և գնահատել տնտեսական քաղաքականության մշակման միջազգային փորձը, ուսումնասիրել տնտեսության զարգացման կարևորագույն ճյուղերը, բացահայտել ՀՀ տնտեսության զարգացման համար հիմք հանդիսացող ճյուղերի առաջընթացը: Ուշադրության կենտրոնում էր Քաթարի «Ազգային տեսլականը-2030»-ը, որն իր մեջ ներառում է Քաթարի 2011–2016 թթ. ազգային զարգացման ռազմավարությունը: Ըստ այս ռազմավարության՝ կառավարությունը փորձում էր դուրս գալ նավթազգային արդյունաբերության ճիրաններից: Մշակված միջոցառումները, քայլերը ուղղված էին զարգացնելու երկրի տարբեր ճյուղերը, և շեշտադրվում էին՝

- **բանկային համակարգը.** բանկերի գործունեության ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ բանկային համակարգի աշխատանքը ամբողջությամբ համաձայնեցվում է կրոնի հետ: Քաթարի բանկային համակարգը տիրապետում է ֆինանսավորման գործիքներին, որոնք բնորոշ են միայն իրենց կրոնին:
- **Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը.** նավթազգային ոլորտի ազդեցությունից դուրս գալու համար տեղեկատվական տեխնոլոգիաների ճյուղը

կտրուկ զարգանում է: Դիտարկելով այս ոլորտը որպես պետության կայուն զարգացման և արդիականացման ապահովման առանցքներից մեկը՝ Քաթարը ջանք և ֆինանսներ չի խնայում արդյունքի հասնելու համար:

Գիտական նորություն: Քաթարի անցած տնտեսական ուղու և «Ազգային-2030» տեսլականի ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հիման վրա բացահայտվել են Քաթարի բանկային համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ զարգացումն ապահովող նորարարական կառուցակարգեր և մոտեցումներ (*սալամ* ֆինանսական գործիք, «Shams» անվտանգության կառավարման համակարգ), որոնց կիրառությունը թույլ կտա լուծել ՀՀ բանկային համակարգի և տեղեկատվական տեխնոլոգիաների առջև ծառացած որոշ խնդիրներ:

Հոդվածում ստացված արդյունքները նախատեսված են ՀՀ կառավարության կողմից տնտեսության բարելավման ուղղությամբ վարվող քաղաքականության իրականացնողների համար՝ ՀՀ-ում տնտեսական հեղափոխությունը համաշխարհային միտումներին համապատասխանեցնելու համար:

Բանալի բառեր՝ Քաթարի Պետություն, բանկային համակարգ, տեղեկատվության տեխնոլոգիաներ, պետության տեսլական, միջնաժամկետ ռազմավարություն, ֆինանսավորման տեսակներ, շարիաթ

КАТАР. ПРОЙДЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ ПУТЬ И “НАЦИОНАЛЬНОЕ ВИДЕНИЕ-2030”

ТАТЕВИК ПАРСАДАНЯН

Аннотация. Современный Катар - развивающаяся страна, которая благодаря своей внешней и внутренней экономической политике находится в центре внимания международных экспертов. Цель исследования - выделить отрасли Катара, которые обеспечили экономический рост страны. Для достижения этой цели, с использованием историко-логических методов сбора, были решены следующие задачи: проанализировать и оценить международный опыт разработки экономической политики, изучить важнейшие отрасли экономического развития, определить прогресс в тех отраслях, которые являются основой развития экономики РА. Основное внимание было уделено «Национальному видению Катара» на период до 2030 года, которое включает национальную стратегию развития Катара на 2011–2016 годы. Согласно этой стратегии, правительство пыталось вырваться из лап нефтегазовой отрасли. Было подчеркнуто, что разработанные меры и шаги направлены на развитие различных отраслей страны.

- **Банковская система:** изучение деятельности банков показало, что работа банковской системы полностью соответствует их религии. Банковская система

Катара обладает инструментами финансирования, уникальными для их религии.

- **Сфера информационных технологий.** чтобы выйти из-под влияния нефтегазового сектора, стремительно развивается отрасль информационных технологий. Рассматривая эту область как одну из опор обеспечения устойчивого развития и модернизации страны, Катар не жалеет сил и средств для достижения результатов.

Научная новизна. По результатам анализа экономического пути Катара и видения «Национальный-2030» были определены инновационные механизмы и подходы к обеспечению эффективного развития банковской системы и информационных технологий (финансовый инструмент *салам*, система управления безопасностью «Шамс»), применение которых позволит решить ряд проблем, стоящих перед информационными технологиями и банковской системой Республики Армении.

Результаты статьи предназначены для лиц, реализующих политику, проводимую Правительством Республики Армения по оздоровлению экономики и с целью приведения экономической революции в соответствие с мировыми тенденциями.

Ключевые слова: Государство Катар, банковская система, информационные технологии, государственное видение, среднесрочная стратегия, виды финансирования, шариат

QATAR. THE PASSED ECONOMIC WAY AND "NATIONAL-2030" VISION

TATEVIK PARSADANYAN

Abstract: Modern Qatar is a developing country, which due to its foreign and domestic economic policy is in the center of attention of international experts. The aim of the study is to highlight the areas of Qatar's economy that have ensured the economic growth of the country. For achieving the mentioned aim, using historical-logical collection methods, have been solved the following problems: analyze and evaluate the international experience of economic policy development, study the most important areas of economic development, identify the progress of the areas that are the basis for the development of the RA economy. The focus was on Qatar's "National Vision" 2030, which includes Qatar national development strategy 2011-2016 years. According to this strategy, the government was trying to get out of the clutches of the oil and gas industry. The developed measures and steps were aimed at developing different branches of the country, it was emphasized:

- **Banking system.** An examination of the activities of the banks revealed that the work of the banking system is fully in line with their religion. The banking system of Qatar possesses financing instruments that are unique to their religion.
- **Field of information technologies.** In order to get out of the influence of the oil and gas sector, the area of information technologies is developing rapidly. Considering this area as one of the pillars of ensuring the sustainable development and modernization of the country, Qatar spares no effort and money to achieve results.

Scientific novelty. Based on the results of the analysis of Qatar's economic path and "National-2030" vision have been revealed innovative structures and approaches to ensure the effective development of information technologies and banking system (*salam* financial instrument, "Shams" security management system), the application of which will allow solving some problems of the information technologies and the banking system of RA.

The results of the article are intended for the implementers of the policy pursued by the Government of the Republic of Armenia to improve the economy and to bring the economic revolution in matching with world trends.

Keywords: State of Qatar, banking system, information technology, state vision, medium-term strategy, types of financing, sharia